

անհրաժեշտ է գիտական ու մանկավարժական կենտրոններում (նկատի ունենալով առանձին հանրապետություններ) զարգացնել փորձառական ու գործիքային (ինստրումենտալ) լեզվաբանությունը, ներգրավելով այդ աշխատանքների մեջ բացի լեզվաբաններից նաև ֆիզիկոս-

ների ու ֆիզիոլոգների, հոգեբանության ու տեխնիկայի բնագավառների աշխատողների:

Միմպոզիումում լավեցին քսանհինգ զեկուցումներ:

Ա. ԱՐԱՄՅԱՆ

ՀՈՐԵԼՅԱՆՆԵՐ

● Հայ ժողովրդի պատմության, լեզվի և հոգևոր մշակույթի ուսումնասիրության երախտավորների մեջ իր հատուկ և արժանավոր տեղն ունի ականավոր լեզվաբան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր Գրիգոր Այվազի Ղափանցյանը, որի ծըննդյան 80-ամյակը լրացավ վերջերս: Գ. Ղափանցյանը ծնվել է 1887 թ. Աշտարակում. նախնական կրթությունն ստացել է տեղի երկրասյան գպրոցում: 1908 թ. նա ընդունվում է Պետերբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետի հայվրացական բանասիրության բաժինը: Ստանալով լեզվաբանական լուրջ պատրաստություն, 1913 թ. առաջին կարգի դիպլոմով ավարտում է այն և վերադառնում հայրենիք:

1913 թ. մինչև 1918 թ. նա էջմիածնի Գևորգյան ճեմարանում զբաղվում է գիտա-մանկավարժական գործունեությամբ. դասավանդում է ընդհանուր լեզվաբանություն, հայերենի համեմատական քերականություն: Դ. Ղափանցյանի գիտական առաջին աշխատանքները տպագրվում են «Արարատ» ամսագրում, 1914 թ. («Հնագույն մի քանի հուշարձաններ», «Լեզվաբանական դիսցիպլիններ և լեզու»):

Երևանի պետական համալսարանի հիմնադրման առաջին իսկ օրից Դ. Ղափանցյանը դասավանդել է զրաբար, հայերենի պատմա-համեմատական քերականություն, ուրարտերեն, ընդհանուր լեզվաբանություն: Այդ մասնագիտությունների գծով պատրաստել է ասպիրանտներ:

1943 թ., երբ հիմնադրվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան, Ղափանցյանը դառնում է նրա հիմնադիր անդամներից մեկը: Մոտ 5 տարի նա ղեկավարել է գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքը, իսկ 1950 թ. մինչև 1956 թ.՝ լեզվի ինստիտուտը:

Ակադեմիկոս Ղափանցյանի գիտական հետազոտությունները նվիրված են հայագիտության կարևոր պրոբլեմներին, հայ ժողովրդի, նրա լեզվի և կուլտուրայի գոյացման ու հետագա զարգացման խնդիրներին: Դրանցից հատկապես պետք է նշել «Chetto-Armeniaca», «Ընդհանուր

լեզվաբանություն», «Ուրարտուի պատմություն», «Խեթական աստվածները հայերի մոտ», «Հին Հայաստանի տեղանունների պատմա-լեզվաբանական նշանակությունը», «Արս Եեղեցիկի պատմությունը», «Հայոց լեզվի ծագման հարցի շուրջը», «Հայասան՝ հայերի բնօրրան», «Հայոց լեզվի պատմություն» (հին շրջան) և այլն:

Ստուգաբանելով հայերենի մի շարք բառեր և բացատրելով լեզվական երևույթներ, Ղափանցյանը վերականգնեց կուլտուրա-պատմական այն կապերը, որ հայ ժողովուրդը ունեցել է իր շրջապատի հնագույն ցեղերի ու ժողովուրդների հետ՝ մեր դարաշրջանից հազարամյակներ առաջ:

Ղափանցյանը նաև նշանավոր պատմաբան էր և հնագետ: Նույնիսկ նրա բանասիրական և լեզվաբանական աշխատությունները, իրենց խոր պատմական մոտեցմամբ, տարբերվում են սովորական լեզվաբանական բնույթի աշխատություններից: Նրանց մեջ տրված են հետազոտման ենթակա երևույթների պատմական միջավայրն ու քաղաքական-տնտեսական հանգամանքները: Պատմաբանն ու լեզվաբանը օրգանապես ձուլված են Ղափանցյանի՝ որպես գիտնականի կերպարի մեջ:

● Սովետական գրականության հիմնադիրներից է Մարիետա Սերգեյի Շահինյանը: Գրական գործունեության 65 տարիներին ընթացքում նա ստեղծել է մոտ ութ տասնյակ դիրք, գրել հարյուրավոր ակնարկներ և հոդվածներ սովետական առօրյայի ամենաբազմադան հարցերի շուրջը, ստեղծել դիտական մեծարժեք ուսումնասիրություններ ու հետազոտություններ:

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի առաջին տարիներին նա գրում է Ռուսաստանի հարավում տեղի ունեցած քաղաքացիական կոռիվներին նվիրված «Փոփոխություն» վեպը, որն արժանանում է Վ. Ի. Լենինի գովասանքին: 20-ական թթ. կեսերին Մ. Շահինյանը գրում է «Վերնախավի տիկնոջ արկածները» վեպը, որ ստեղծում է աշխարհը վերափոխողների՝ բուլշևիկների կերպարը:

1931 թ. լույս է տեսնում սոցիալիստական շինարարության թեմային նվիրված լավագույն երկերից մեկը՝ «Հիդրոցենտրալը»: Մ. Շահինյանի «Տարաս Շևչենկո», «Գյոթե» մենագրությունները վաղուց է, ինչ ամենալայն ճանաչում են դրտել գրականությունը ուսումնասիրողների շրջաններում:

Հայրենական պատերազմի ծանր տարիներին Շահինյանը ստեղծեց թիկունքի աշխատողների հայրենանվեր գործը պատկերող «Ուրալը պաշտպանության դիրքերում» ակնարկագիրքը: Ետպատերազմյան տարիներին, շրջագայելով Սովետական Միությունում, գրեց «Հնգամյակի ճամփաներով» ակնարկաշարը:

Ավելի քան երեք տասնամյակ գրողին զբաղեցրել է լենինյան թեման, որն իր գեղարվեստական մարմնավորումը գտավ «Ուլյանովների ընտանիքը», «Առաջին Համառուսաստանյանը» վեպ-ժամանակագրություններում:

Հետաքրքրությունների իր հարուստ ոլորտում Շահինյանը միշտ վառ է պահել սերը իր ժողովրդի, Սովետական Հայաստանի, նրա կյանքի ու մշակույթի նկատմամբ: Հայաստանի թեմային Շահինյանը անդրադարձել է դեռևս նախահեղափոխական տարիներին «Հայերը», «Հայ ճարտարապետության մասին», «Հայ ժողովրդական հեքիաթները», «Միքայել Նալբանդյան» և այլ հոդվածներում: «Հայաստանին», «Հայ ժողովրդին» բանաստեղծություններում նա որդիական սրտացավությամբ էր խոսում հարազատ ժողովրդի դառը նակատագրի մասին, երազում էր նրան տեսնել ազատ ու երջանիկ: Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո նա սերտորեն կապվում է մեր հանրապետության իրականությանը և մեկը մյուսի ետևից լույս է ընծայում «Արագած բարձրանալը», «Շրջագայություններ Հայաստանում», «Զանգեզուրի պղինձը» ակնարկաշարերը, որոնցում արծարծվում էին հանրապետության տնտեսության վերականգնման ու զարգացման կարևորագույն խնդիրները, սովետական մարդու ներաշխարհում կատարվող փոփոխությունները: Երբ 1927 թ. սկսվեց Ձորագետի հիդրոկայանի շինարարությունը, Շահինյանը մոտ մեկ ու կես տարի ապրեց այնտեղ: Բուն կյանքի տված հարուստ նյութն էլ դարձավ «Հիդրոցենտրալի» գլխավոր թեման: Սովետական Հայաստանի կառավարությունը բարձր գնահատելով Մ. Շահինյանի մասնակցությունը Ձորագետի շինարարությանը, 1933 թ., գրական գործունեության 30-ամյակի կապակցությամբ, նրան պարգևատրում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով: 1950 թ. լույս տեսավ գրողի «Ճանապարհորդություն Սովետական Հայաստանում» գիրքը, որը արժանացավ պետական մրցանակի:

Անվանի գրող, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ

Մ. Շահինյանը մինչև օրս էլ շարունակում է իր ճանապարհորդությունները հայրենիքում ու արտասահմանյան երկրներում, ուսումնասիրում կյանքը և սովետական մարդու, իսկական ինտերնացիոնալիստի դիրքերից վերարտադրում այն:

● Արգասավոր և ուսանելի է ակադեմիկոս Կարապետ Աղաբեկի Մելիք-Օհանջանյանի կյանքի ուղին: Զեռք բերելով գիտական լուրջ պատրաստականություն և տիրապետելով մի շարք հին ու նոր լեզուների, նա իր ամբարած գիտելիքները ծառայեցրել է հայ մշակույթի բազմաթիվ բնագավառների (բանահյուսություն, գրականություն, աղբյուրագիտություն) հետազոտությանը, հանդես գալով որպես դասական հայագիտության և արևելագիտության ավանդների շարունակողը մեր օրերում:

Կ. Ա. Մելիք-Օհանջանյանը ծնվել է 1893 թ. Մեղրու շրջանի Կալեր գյուղում: Նրա նախնական ու բարձրագույն կրթության հոգսը իր վրա է վերցրել հորեղբայրը՝ նշանավոր իրավաբան Փարսազան Մելիք-Օհանջանյանը: Կ. Մելիք-Օհանջանյանը սկզբում սովորել է Գանձակի տղայոց գիմնազիայում, իսկ ապա 1903—1904 թ. ընդունվում է արևելագիտական նշանավոր կրթական օջախներից մեկը՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանը:

1914 թ. Լազարյան ճեմարանի պրոֆեսորական խորհուրդը Կ. Մելիք-Օհանջանյանին, որպես խոստումնալից ու առաջավոր ուսանողի, գործուղում է Գերմանիա՝ գիտելիքներն ու լեզուների իմացությունը խորացնելու: Կ. Մելիք-Օհանջանյանը մեծանուն հայագետ պրոֆեսոր Յոզեֆ Մարկվատի միջամտությամբ թույլտվություն է ստանում որպես ազատ ունկնդիր հաճախելու Բեռլինի համալսարանը:

1920 թ. հարուստ գիտելիքներով զինված Կ. Մելիք-Օհանջանյանը վերադառնում է Երևան: Սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո, 1920 թ. դեկտեմբերին նա աշխատանքի է անցնում Կարմիր բանակի քաղվարչությունում, դառնալով կարմիրբանակային առաջին հայ թերթի՝ «Կարմիր բանակի» խմբագիրը: Սկսվում է Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի մանկավարժական-մեթոդական ու գիտա-վարչական գործունեության մի բեղուն շրջան. շուրջ 15 տարի նա դասախոսում ու դասավանդում է Երևանի դպրոցներում, բուհերում, վարում է Հայաստանի գիտահետազոտական մի շարք հիմնարկների նախագահի, գիտական քարտուղարի, բաժնի վարչի պաշտոններ, գլխավորում է բանահյուսական խմբարշտավների աշխատանքները: 1935 թ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանին շնորհվում է պրոֆեսորի

կոչում: 1962 թ. Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի հրամանագրով նրան տրվում է գիտության վաստակավոր գործչի կոչում: 1965 թ. նա ընտրվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ:

Կ. Մելիք-Օհանջանյանի գիտական գործունեությունը սկսվում է գեոլոգիական ուսանողական նրստարանից: 1913 թ., տակավին 20 տարեկան, նա Մոսկվայի Լազարյան ճեմարանում հայոց գրերի 1500-ամյակի և տպագրության 400-ամյակի առթիվ հանդես է գալիս հայ տպագրության մասին հանգամանալից զեկուցմամբ: Մեկ տարի անց, 1914 թ. պրոֆ. Կ. Կոստանյանի առաջարկությամբ Կ. Մելիք-Օհանջանյանը գրում է ուսումնասիրություն՝ «Մամիկոնյանների նախարարական տոհմը ըստ Փավստոս Բուզանդի պատմության»:

Պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանի անվան հետանիվելիորեն կապված են «Սասնա ծռեր» հայ ժողովրդական վեպի հավաքման, գիտական աժբողջական հրատարակության աշխատանքները: Ակադեմիկոս Մ. Առեղյանի հետ գործակցած, Կ. Մելիք-Օհանջանյանը 1936 թ. (իսկ 1944 թ., Մ. Առեղյանի մահից հետո՝ միայնակ) իրականացրել է «Սասնա ծռեր» («Սասունցի Դավիթ») ժողովրդական վեպի գիտական հրատարակությունը: Դիցարանության, առասպելների ու հավատալիքների ժողովրդական վեպի հետ ունեցած առնչության ու փոխհարաբերության հարցերին է նվիրված նրա «Միթրա Միհրը «Սասնա ծռերի» մեջ» ուսումնասիրությունը: Կ. Մելիք-Օհանջանյանը հետազոտել է նաև հայ բանահյուսության մի շարք հանգուցային պրոբլեմներ, ինչպես նաև միջնադարյան հայ գրականության ու բանասիրության կարևոր հարցեր ու խնդիրներ («Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի, «Լուսավորչի վեպը», «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահնամում» ու հայ մատենագրության մեջ», «Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից», «Վարք Մաշտոցի» գրական ժանր և նրա պատմագրական նշանակությունը» և այլն):

Կ. Մելիք-Օհանջանյանը ակադեմիկոս բանասեր-աղբյուրագետ է: Մեծ արժեք են ներկայացնում նրա հրատարակած XIII դարի հայ նշանավոր պատմագիր Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» քննական բնագիրը ուսումնասիրությամբ հանդերձ, «Պատմություն Փարեզի և Վեննայի» և «Պատմություն Վենետիկ քաղաքին» միջնադարյան թարգմանական գրական հուշարձանների քննական հրատարակությունները (1966 թ.):

Վաստակաշատ գիտնականն այժմ էլ մեծ եռանդով ու ջանասիրությամբ իր ուժերն ու կարողությունները նվիրաբերում է հայագիտության

կարևոր հարցերի մշակման ու քննարկման և երիտասարդ կադրերի պատրաստման գործին:

● Լրացավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, պատմական գիտությունների դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Աբգար Խուրենի Հովհաննիսյանի ծննդյան 60 և գիտական ու մանկավարժական գործունեության 40 տարին:

Ա. Խ. Հովհաննիսյանը ծնվել է Թիֆլիսում, իրավաբանի ընտանիքում: 16 տարեկան հասակում նա ավարտում է միջնակարգ դպրոցը, ընտանիքով փոխադրվում Հայաստան և 1924 թ. ընդունվում Երևանի համալսարանի պատմա-գրական ֆակուլտետը: Դեռևս ուսանողական տարիներին Ա. Խ. Հովհաննիսյանը ցուցաբերում է մեծ հետաքրքրություն պատմական գիտության նկատմամբ: Քսանամյա շրջանավարտը մեկնում է Մոսկվա, ընդունվում ասպիրանտուրա և ակադ. Վոլգինի ղեկավարությամբ մասնագիտանում նոր պատմության ասպարեզում: 1931 թ. հրատարակվում է նրա անդրանիկ աշխատությունը՝ «Ռետիֆ դե Լյա Բրետոնների ուտոպիան», որը խոստումնալից հեղինակին դարձնում է ճանաչված հետազոտող:

1931—1935 թթ. Ա. Խ. Հովհաննիսյանը դասախոսում է Երևանի համալսարանում, ստեղծելով նոր պատմության օրինակելի դասընթաց: 1935—1938 թթ. լինում է Մոսկվայում, դոկտորանտուրայում, որտեղ բազմալեզու նյութերի ուսումնասիրության հիման վրա ստեղծում է «Շարլ Ֆուրիեի հասարակական իդեալի զարգացումը» մենագրությունը, 1938 թ. այն պաշտպանում որպես դոկտորական դիսերտացիա և հրատարակում Մոսկվայում: 1938—1960 թթ. նա աշխատում է Երևանի համալսարանում որպես նոր պատմության ամբիոնի վարիչ, միաժամանակ վարելով ռուսական մանկավարժական ինստիտուտի նույն ամբիոնը: 1938—1947 թթ. նա միաժամանակ համալսարանի պրոռեկտորն էր:

Հայրենական պատերազմի օրերին Ա. Խ. Հովհաննիսյանը ընդունվում է կոմունիստական կուսակցության շարքերը, ակտիվորեն մասնակցում քաղաքական-դաստիարակչական աշխատանքներին, պրոպագանդելով հայրենասիրության, ժողովուրդների բարեկամության ու եղբայրության գաղափարները:

1945 թ. հրատարակվում է Ա. Խ. Հովհաննիսյանի «Հովսեփ էմին», իսկ 1947 թ.՝ «Ռուսաստանը և հայկական ազատագրական շարժումները XVIII դ. 80-ական թթ.» մենագրությունները:

1947 թ. սկզբներին Ա. Խ. Հովհաննիսյանը նշանակվում է Հայկական ՍՍՀ գիտությունների

ակադեմիայի պատմության ինստիտուտի գի-
րեկտոր: Նույն տարում ընտրվում է ակադեմիայի
իսկական անդամ: 1949—1960 թթ. ղեկավարում
է ակադեմիայի հասարակական գիտությունների
բաժանմունքը, 1960—1963 թթ., ինչպես և ներ-
կայումս, հանդիսանում է ակադեմիայի վիցե-
պրեզիդենտը:

Գիտական-կազմակերպչական գործունեու-
թյանը զուգընթաց Ա. Ռ. Հովհաննիսյանը շա-
րունակում է իր գիտական-ստեղծագործական
աշխատանքը ինչպես Հայաստանի, Անդրկովկա-
սի ու հայ-ոսուական հարաբերությունների
պատմության, այնպես և արևմտեվրոպական
հասարակական մտքի ու սոցիալիստական գա-
ղափարների ձևավորման պատմության ուսում-
նասիրության բնագավառում: 1958 թ. Մոսկվա-
յում հրատարակվեց «Եարլ Ֆուրիե» աշխատու-
թյունը, որն ընդհանրացնում է հեղինակի նա-
խորդ ուսումնասիրությունները, մեծապես լրաց-
նելով ու հարստացնելով դրանք: Նույն թվակա-
նին Երևանում հրատարակված «Անդրկովկասի
միացումը Ռուսաստանին և միջազգային հարա-
բերությունները XIX դ. սկզբներին» մենագրու-
թյունը շարունակում, ամբողջացնում ու ընդհան-
րացնում է նախորդ երկերում արծարծված խըն-
դիրները, դրանք քննում լայն միջազգային հա-
րաբերությունների ֆոնի վրա: Վերջերս հրապա-
րակված նրա «Կոմունիստական գաղափարները
Ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին»
ս: շխատությունը խոշոր ներդրում է հասարակա-
կան մտքի պատմության բնագավառում:

● ՀԱՍՏ ԳԱ իսկական անդամ, գիտության
վաստակավոր գործիչ, պատմական գիտություն-
ների դոկտոր, պրոֆ. Սուրեն Տիգրանի Ներսիսյանի
ծննդյան 60-ամյակը և գիտական գործունեու-
թյան 40-ամյակը նշվեց ս. թ. ապրիլին:

Իր ծննդավայր Թիֆլիսում միջնակարգ կրթու-
թյուն ստանալուց հետո, Երևանի պետական հա-
մալսարանի պատմա-տնտեսագիտական ֆակուլ-
տետը և Թիֆլիսի կովկասագիտության ինստի-
տուտի ասպիրանտուրան ավարտելով, Ս. Տ. Ն-
րեմյանը աշխատանքի է անցնում Լենինգրադի
Արևելագիտության ինստիտուտում: 1941 թ. նա
փոխադրվում է Երևան և աշխատանքի անցնում
Արմֆանում և ապա՝ գիտությունների ակադե-
միայում:

Ս. Տ. Նրեմյանի գիտական գործունեությունը
ընթացել է մի քանի հիմնական ուղղությամբ:

Նոր տվյալներ գիտական շրջանառության մեջ
դնելու և հին տվյալներին նոր մեկնաբանու-
թյուն տալու ճանապարհով Ս. Տ. Նրեմյանը նա-

խամիջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսա-
կան հարաբերությունները բնորոշեց որպես
ստրկատիրական և բացահայտեց նրանց էու-
թյունը բնութագրող մի շարք կարևոր կողմեր:
Այս կապակցությամբ նա զբաղվեց նաև հայ
ժողովրդի ծագման հարցով: Պրոֆ. Նրեմյանը
ձեռնամուխ եղավ այդ խնդրի ուսումնասիրմանը
այն ժամանակ, երբ հայագիտության մեջ երկու
տեսություններ վիճարկում էին հայ ժողովրդի
ծագման պրոբլեմը լուծելու իրենց իրավունքը:
Առաջին տեսության կողմնակիցները հայ ժողո-
վրդին համարյա կազմավորված վիճակում
դրսից եկած էին համարում, երկրորդ տեսությու-
նը հայ ժողովուրդը ամբողջությամբ համարում
էր տեղաբնիկ ցեղերի արգասիք: «Գաղթի» և
«տեղականության» այս երկու տեսություններից
Նրեմյանը վերցրեց այն, ինչ որ առավելապես իր
հաստատումն է գտնում աղբյուրների մեջ և
եկավ այն եզրակացության, որ հայ ժողովուրդը
կազմավորվել է տեղում, Հայկական լեռնաշխար-
հում, որ հայ ժողովրդի հիմնական բաղադրիչը
Հայկական լեռնաշխարհում վաղուց ի վեր բնակ-
վող խուրրո-ուրարտական ցեղերն են, որոնց
մարդաբանական տիպի, մշակույթի և այլ տար-
րերի ժառանգորդը հայ ժողովուրդն է: Միաժա-
մանակ ելնելով հայոց լեզվի հնդեվրոպական
բնույթից և մի շարք այլ տվյալներից, նա դրա-
նում է, որ հայ ժողովրդի կազմավորման գոր-
ծում որոշակի դեր են խաղացել նաև հնդեվրո-
պական ցեղերը, որոնց առկայությունը Հայկա-
կան լեռնաշխարհում հաստատվում է առնվազն
մ. թ. ա. II հազարամյակից սկսած:

Ս. Տ. Նրեմյանը քաջ գիտակ է միջնադարյան
մատենագրությանը. նա իր գիտելիքները վրա-
ցագիտության բնագավառում ի սպաս է դնում
հայ-վրացական հարաբերությունների վարդապ-
ման նոր փուլին:

Ս. Տ. Նրեմյանը սովետահայ պատմական աշ-
խարհագրության հիմնադիրն է: Հայ ժողովրդի
պատմության հիմնական էտապները իրենց
մարմնավորումը գտան նրա կազմած քարտեզնե-
րի մեջ, որոնցից շատերը իրենց արժանի տեղն
են գրավում ինչպես հանրապետական, այնպիս
և միութենական նշանակություն ունեցող աշխա-
տություններում, ձեռնարկներում ու դասագրքե-
րում:

Գիտա-մանկավարժական և գիտա-կազմա-
կերպչական աշխատանքի ընթացքում, որպես ԳԱ
պատմության ինստիտուտի գիրեկտոր կամ որ-
պես հին և միջին դարերի սեկտորի վարիչ, նա
պատրաստեց բազմաթիվ գիտական կադրեր,
որոնք շատ բանում պարտական են իրենց ու-
սուցիչին: